

ՊԱՐԶ ՀԱՇՎԱՐԿ

Տրված n բնական թվի համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները. նախ այն պետք է ներկայացնել k -ական հաշվարկային համակարգում, այնուհետև գտնել ստացված թվի թվանշանների արտադրյալի և գումարի տարբերությունը այդ հաշվարկային համակարգում:

Օրինակ, դիցուք $n=239$, $k=8$: 239-ի ներկայացումը 8-ական հաշվարկային համակարգում 357 է, հետևաբար խնդրի պատասխանը կլինի $3*5*7-(3+5+7)=90$:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված են n և k բնական թվերը ($1 \leq n \leq 10^9$, $2 \leq k \leq 10$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակներ

N°	stdin	stdout
1	239 8	90
2	1000000000 7	-34